ԿՐԹԱԿԱՆ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ
ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԵՆՏՐՈՆ

Ֆոկուս խմբային քննարկում

Մեթոդական ուղեցույց

© Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոն, 2012թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ֆոկուս խմբային քննարկման մեթոդի նկարագրությունը 3
Որակական և քանակական մեթոդների կիրառության հնարավորությունները 3
Ֆոկուս խմբային քննարկման մեթոդը որպես որակական հետազոտության տեխնիկա 6
Կիրառման նպատակները և ոլորտները 6
Ֆոկուս խմբային քննարկման կազմակերպումը և իրականացումը 7
Ֆոկուս-խմբային հետազոտության պլանավորում 7
Խմբերի քանակի սահմանումը և մասնակիցների ընտրության տեխնիկաները 7
Ֆոկուս խմբերի կազմի սահմանումը 7
Ֆոկուս խմբային քննարկման ուղեցույցի/հարցաշարի մշակում 8
Ֆոկուս խմբի տեխնիկական ապահովում 9
Ֆոկուս խմբային քննարկման փուլերը 9
Ֆոկուս խմբային քննարկումների մոդերատորի և ասիստենտի դերը 13
Ֆոկուս խմբի տարբեր փուլերում մոդերատորի կողմից կիրառվող տեխնիկաները 13
Ֆոկուս խմբի տարբեր փուլերում օգնական կողմից կիրառվող տեխնիկաները 15
Առանձնահատուկ հիմնախնդիրները ֆոկուս խմբային քննարկման ընթացքում և դրանք հաղթահարելու ռազմավարությունները 16
Ֆոկուս խմբային քննարկման արդյունքների վերլուծություն և ներկայացում 21
Ֆոկուս խմբային քննարկման արդյունքների մշակումը 21
Ֆոկուս խմբային քննարկումների արդյունքների մշակման առանձնահատկությունները 22
Վերջնական արդյունքների ներկայացումը հաշվետվության տեսքով 23
Գրականություն 24

Ֆոկուս խմբային քննարկման ուղեցույց

Ֆոկուս խմբային քննարկման մեթոդը լայնորեն կիրառվում է սոցիալական հիմնախնդիրների վերաբերյալ հասարակության տարբեր շերտերի ներկայացուցիչների խմբային դիրքորոշումների, կարծիքների, վերաբերմունքի բացահայտման նպատակով: Վերջին տարիներին այս մեթոդի կիրառումը տարբեր ոլորտներում ապացուցում է մեթոդի արդյունավետությունը: Ուղեցույցը նախատեսված է այն մասնագետների համար, ովքեր իրենց աշխատանքային պրակտիկայում կիրառում են ֆոկուս խմբային քննարկման մեթոդը:

Ֆոկուս խմբային քննարկման մեթոդի նկարագրությունը

Որակական և քանակական մեթոդների կիրառության հնարավորությունները

Որակական հետազոտությունները առաջարկում են հատուկ տեխնիկաներ տեղեկատվություն ստանալու համար այն մասին, թե մարդիկ ինչ են մտածում կամ զգում: Այս հետազոտություններն կոչված են բացահայտելու երևույթների առաջացման, տարածման, պահպանման, վերացման հիմքը, ի տարբերություն քանակական հետազոտությունների, որոնց նպատակը երևույթների տարածվածության մակարդակի պարզումն է: Որակական հետազոտությունները հնարավորություն են տալիս բացահայտելու մարդկանց վարքի հնարավոր դրսևորումների, դիրքորոշումների, վերաբերմունքի հիմքը: Որակական հետազոտությունները իրականացվում են պատասխանելու համար «ինչու» հարցին, իսկ քանակական հետազոտությունները՝ «ինչքան», «ինչքան հաճախ»: Որակական հետազոտությունները *մեկնաբանող* են: Որակական հետազոտությունները չունեն ներկայացուցչականության ապահովման խնդիր, ի տարբերություն քանակական հետազոտությունների:

Որակական և քանակական հետազոտությունների տարբերությունը լուսաբանող

ԱՂՅՈՒՍԱԿ

Որակական	Քանակական
Ապահովում է հասկացման խորությունը	Չափում է տարածվածության մակարդակը
Հարցնում է “Ինչու”	Հարցնում է “Ինչքան”, “Ինչքան հաճախ”
Ուսումնասիրում է դրդապատճառները	Ուսումնասիրում է գործողությունները
Սուբյեկտիվ է	Օբյեկտիվ է
Կարող է բացահայտել	Ապահովում է ապացույցներ
Հնարավորություն է տալիս թափանցել վարքի, միտումների, գործընթացների սուբյեկտիվ նշանակությունների մեջ	Չափում է գործողությունների, միտումների, երևույթների, գործընթացների մակարդակը
Մեկնաբանում է	Նկարագրում է

Քանակական և որակական հետազոտությունները ունեն առավելություններ և սահմանափակումներ, ինչը պայմանավորում է դրանց զուգահեռ օգտագործումը: Սոցիալական գիտություններում հիմնախնդիրների համապարփակ ուսումնասիրման նպատակով կիրառվում է *տրիանգուլացիայի մեթոդը:* Տրիանգուլացիայի մի քանի տեսակ գոյություն ունի՝ մեթոդների, աղբյուրների, հետազոտողների և տեսության տրիանգուլացիա:

Հաճախակի կիրառվում է մեթոդների տրիանգուլացիան: Որակական հետազոտություններում տրիանգուլացիայի նպատակը հիմնախնդրի վերաբերյալ հավաստի, վստահելի տեղեկություն, արդյունք ստանալն է՝ տեղեկության ստացման մի քանի մեթոդների կիրառման միջոցով, կարող է կիրառվել նաև քանակական մեթոդներ՝ հետազոտական խնդիրներին համապատասխան: Այսինքն՝ միաժամանակ օգտագործվում են տեղեկության ստացման մի քանի մեթոդներ՝ խմբային քննարկումներ, ձևայնացված հարցազրույցներ, դիտարկումներ, փաստաթղթերի վերլուծություն և այլն:

Ինչպես որակական, այնպես էլ քանակական հետազոտությունների արդյունավետության վրա ազդում է դրանց կիրառման նպատակահարմարության հիմնավորումը: Հիմնավորումը ուղղակիորեն կապված է հետազոտական խնդիրներից, բնույթից, ինչպես նաև այդ հետազոտությունները կիրառող անհատից, կազմակերպության նպատակներից, գործունեության ոլորտից:

Որակական հետազոտությունեում առավել լայնորեն կիրառվում են **ֆոկուս խմբային քննարկման** և **խորին հարզազրույցի մեթոդները**: Պատմականորեն որակական հետազոտությունները առաջացել են մի շարք դիսցիպլինաներից՝ **հասարակագիտություն, հոգեվերլուծական տեսություն, գրական քննադատություն**, որոնցից է եկել գաղափարներ, հասկացություններ մեկնաբանելու և համադրելու սկզբունքը: Այս մեթոդները կիրառվել են դրդապատճառներ ուսումնասիրելու նպատակով, հատկապես շուկայագիտության ոլորտում: Դրդապատճառների ուսումնասիրության անհրաժեշտությունը հանգեցրել է նրան, որ որակական հետազոտությունները շարունակում են կարևոր դեր խաղալ շուկայագիտության բնագավառում: Չնայած այս գնահատականին՝ կարևոր է գիտակցել որակական հետազոտության հիմքերը հասկանալու նպատակով այն նախադրյալները, որոնց վրա դրանք կառուցվում են: Եթե հետազոտողը չի կիրառում այս դիսցիպլինաներից որևէ ասպեկտ, ապա նա չի իրականացնում "ճշմարիտ" որակական հետազոտություն:

Կա որակական հետազոտության մեթոդները կիրառելու *կոնցեպտուալ և պրակտիկ* պատճառ: Նախ այն ապահովում է պատասխանների *խորությունը*, ի տարբերություն քանակական հետազոտությունների: Որակական հետազոտությունները նաև հնարավորություն են տալիս հետազոտության գործընթացում *կայացնել որոշումներ*: Ունենալով սուբյեկտիվ և բնազդային տարրեր՝ հետազոտության նախնական փուլում այն կարող է կիրառվել հիմնախնդիրնրի և տեղեկատվական կարիքների սահմանման, վարկածների ձևավորման և փոփոխականների սահմանման նպատակով:

Այս մեթոդները կիրառելու *պրագմատիկ պատճառներն* են՝

Ծախս. Ընդհանուր առմամբ, որակական հետազոտությունները առավել տնտեսող են, քան քանակական:

Ժամանակ. Որակական մեթոդները հնարավորություն են տալիս խնայել ժամանակը:

Ճկունություն. Հետազոտության ծրագիրը կարող է փոփոխվել հետազոտության գործընթացի ընթացքում:

Թիրախային լսարանի հետ ուղիղ կապ: Որակական հետազոտությունները ծրագրի կառավարմանը հնարավորություն են տալիս դիտարկելու թիրախային լսարանին ուղղակիորեն:

Տեխնիկական միջոցների ոչ պարտադիր լինելը: Որակական հետազոտությունները կարող են իրականացվել առանց տեխնիկական ապահովության:

Որակական հետազոտության մեթոդները լայնորեն կիրառվում են հետևյալ **4 եղանակով:** Որպես՝

1. Տեղեկության ստացման առաջնային մեթոդ
2. Գաղափարների բացահայտման գործիք,
3. Քանակական հետազոտության փուլ
4. Քանակական հետազոտության գնահատման միջոց:

Որակական հետազոտության հաջողության *3 բանալիները*՝

«Ինչու» հարցը տալու արվեստ

Որակական հետազոտության ներկայացուցիչներն են զարգացրել «ինչու» հարցը տալու մշակույթը: Միայն բաց հարցերի պատասխան լսելը կարող է խառնաշփոթ առաջացնել ազդեցությունները, դրդապատճառները և դիրքորոշումները հասկանալու համար: Պետք է կիրառել հետևյալը՝

- «Ինչու» հարցերը կարող են վերացնել խառնաշփոթը,
- Այս հարցերը կարող են նպատակահարմար լինել պատասխանողի կենսափորձը վերհանելու համար,
- Նախատրամադրվածությունը կամ ուրիշի դերը վերցնելը գիտակցելը հետազոտողի կողմից հանգեցնում է նրան, որ պետք է հարցնել այն, ինչ իրականում պետք է/ցանկալի է իմանալ:

Ակտիվ լսելու արվեստ

Ակտիվ լսելու տեխնիկան ենթադրում է լսել մասնակիցների պատասխանները, ընկալել դրանք, վերաշարադրել և կրկնել այն մասնակիցներին: Սա նպաստում է, որ

- մասնակիցը հասկանա, թե որքանով է իր կարծիքը ընկալելի,
- մոդերատորը ճշտի կամ հստակեցնի հնչեցված կարծիքները:

Որակական հետազոտություն իրականացնողները պետք է կարողանան ակտիվ լսել պատասխանողին, ինչը բավականին դժվար է և հաճախ են հետազոտողները կատարում սխալներ հենց այս հարցում: Լսելու արվեստը պահանջում է զգայունության և անդրադարձման (ռեֆլեքսիայի) բարձր աստիճան:

Հետազոտությունը որպես հետախուզության ստեղծագործական գործընթաց

Որակական հետազոտությունը նման է հետախուզման գործընթացին. այստեղ ևս կիրառվում են նույն տեխնիկաները և հարցերը, այստեղ ևս չեն կիրառվում պատրաստի

մոտեցումները: Երկու դեպքում էլ ստեղծագործական մտածողության բարձր մակարդակ է պահանջվում նոր իրավիճակներում կիրառելու համար:

Ֆոկուս խմբային քննարկման մեթոդը որպես որակական հետազոտության տեխնիկա

Ֆոկուս խմբային քննարկման և խորին հարցազրույցի մեթոդները առավել շատ կիրառվող մեթոդներն են որակական հետազոտություններում: Ֆոկուս խմբային քննարկման մեթոդը օգտագործում է խմբային դինամիկան և հնարավորություն է տալիս պատասխանողների փոքր խմբին ուղղորդվելու մոդերատորի կողմից դեպի հետազոտության թեմաների խորքը: Խորին հարցազրույցը ևս բաց հարցերով իրականացվող մեթոդ է, սակայն իրականացվող դեմ առ դեմ տեխնիկայով՝ պատասխանողի և հարցազրուցավարի միջև:

Կիրառման նպատակները և ոլորտները

Ֆոկուս խմբային քննրակման մեթոդը առավել լայնորեն է կիրառվում հետևյալ նպատակներով՝

Խմբային փոխգործողություն. Պատասխանողների փոխգործողությունը նպաստում է իրական պատասխանների ի հայտ գալուն և հնարավորություն է տալիս նոր և արժեքավոր մտքերի դրսևորմանը:

Դիտարկում. Հնարավոր է դիտարկել քննարկման գործընթացը և սկզբնաղբյուրի միջոցով ներթափանցել պատասխանողների վարքի, դիրքորոշումների, լեզվի և զգացողությունների խորքը, ինչը կարևոր է ծրագրի մշակման վաղ, ստեղծագործական փուլում:

Ծախսեր և ժամանակ. Ֆոկուս խումբը կարող է իրականացվել արագ և ընդհանուր առմամբ պակաս ծախսատար է:

Գաղափարների գեներացիա. նոր գաղափարների առաջացման, հավաքման նպատակով այս մեթոդը կարող է օգտակար լինել:

Ծրագրի փաթեթի փորձարկում. Որևէ ծրագրի ներդրումից առաջ կարելի է այն ներկայացնել հնարավոր օգտագործողների խմբին՝ նոր գաղափարներ, կարծիքներ ստանալու համար:

Ուղերձի հասկացության գնահատում. ուղերձները նախնական տեսքով կարող են ներկայացվել թիրախային լսարանին գնահատելու և կատարելագործելու համար:

Հիմնախնդրի սահմանում. այս մեթոդը կարող է օգնել հիմնախնդրի հստակ ձևակերպմանը այն կրողների կամ դրա մասին առավել տեղեկացվածների միջոցով:

Ֆոկուս խմբային քննարկման կազմակերպումը և իրականացումը

Ֆոկուս-խմբային հետազոտության պլանավորում

Ֆոկուս խմբային քննարկման իրականացումը պահանջում է հստակ պլանավորում: Պլանավորման ընթացքում հետազոտողը պետք է կայացնի հետազոտության ծրագրին և իրականացմանը վերաբերող մի քանի որոշումներ: Այդ որոշումները ներառում են հետազոտության նպատակների, խնդիրների սահմանում, այնուհետև արդեն իրականացմանը վերաբերող որոշումներ՝ խմբերի քանակը և յուրաքանչյուր խմբի համար մասնակիցների որակավորումները: Ինչպես նաև պետք է պլանավորվի և հստակ որոշվի խմբերի մասնակիցների քանակը, քննարկման իրականացման վայրը, ժամանակը, տևողությունը:

Խմբերի քանակի սահմանումը և մասնակիցների ընտրության տեխնիկաները

Խմբերի անհրաժեշտ քանակը որոշելու համար, պետք է առաջին հերթին տեղեկատվություն հավաքել կամ վարկածներ ձևակերպել ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ: **Խմբերի քանակը** սահմանելիս կարելի է առաջնորդվել հետևյալ սկզբունքներով՝

- Ուսումնասիրվող թեմայի համար հիմնավորված ձևով կարևոր յուրաքանչյուր փոփոխականի, ցուցանիշի համար առնվազն երկու խումբ: Օրինակ՝ երկուական խումբ թիրախային լսարանի յուրաքանչյուր սեգմենտներից՝ կանայք և տղամարդիկ, մասնագիտական կրթություն ունեցող և չունեցող, բակալավրի ուսանողներ և մագիստրատուրայի ուսանողներ, ուսանող և շրջանավարտ և այլն:
- Իրականացնել բավարար քանակի խմբային քննարկումներ՝ ներկայացվող նյութերի շրջապտույտի համար:
- Իրականացնել այնքան քննարկում, քանի դեռ չի կրկնվել արդեն ստացված տեղեկատվությունը, այն է, կիրառել տեղեկատվական հագեցվածության սկզբունքը:
- Իրականացնել քննարկումներ յուրաքանչյուր աշխարհագրական տարածքում, որտեղ առկա է նշանակալի տարբերություն: Հաճախ մարդկանց վարքի, դիրքորոշումների, վերաբերմունքի, տեղեկացվածության վրա ազդում է աշխարհագրական վայրը, եղանակային պայմանները, տնտեսական պայմանները և այլն: Հետևաբար սպառիչ հետազոտվող թեմայի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար անհրաժեշտ է հետազոտության մեջ ներառել բոլոր աշխարհագրական այն վայրերից մասնակիցներ, որտեղ կարող են լինել առանձնահատկություններ:

Ֆոկուս խմբերի կազմի սահմանումը

Յուրաքանչյուր քննարկմանը պետք է ներգրավել 6-12 մասնակից՝ հետազոտության նպատակից կախված և խնդիրներից և որքան եք պլանավորում խորանալ թեմայի մեջ: Սովորաբար խորհուրդ է տրվում ներգրավել 10 մասնակցի: Յուրաքանչյուր խումբ պետք է լինի համասեռ, համատարր, այսինքն՝ հետազոտության համար կարևոր միևնույն ցուցանիշի

կրողներ, օրինակ, եթե հետազոտության համար կարևոր է միևնույն խնդրի պարզաբանումը կանանց և տղամարդկանց մոտ, ապա պետք է քննարկումները կազմակերպել առանձին տղամարդկանց, առանձին կանանց հետ: Սա նպաստում է, որ մասնակիցները իրենց զգան հարմարավետ, յուրայինների շարքում:

Ֆոկուս խմբային քննարկման ուղեցույցի/հարցաշարի մշակում

Քննարկման ուղեցույցը կամ հարցաշարը թեմաների ցանկ կամ հարցերի ոլորտների ցանկ է, որը պետք է քննարկել մասնակիցների հետ: Այն հետազոտության կարևոր մասն է կազմում, քանի որ տեղեկության ստացման գործիք է: Եթե ուղեցույցը հստակ է մշակված, ապա արդյունքները ևս կլինեն հիմնավորված և ամբողջական:

Ուղեցույցը ծառայում է որպես հետազոտության նպատակի և խնդիրների վերաբերյալ հարցադրումների, դատողությունների ամբողջություն: Ուղեցույցը պետք է մշակեն մոդերատորը և հետազոտություն իրականացնողը միասին՝ հիմնվելով հետազոտության նպատակների և խնդիրների վրա: Ուղեցույցի մշակումը ժամանակատար և աշխատատար գործողություն է, ինչը պահանջում է հետազոտության նպատակների և խնդիրների վերաբերյալ հստակ տեղեկատվություն:

Ուղեցույցը ծառայում է նաև որպես կողմնորոշիչ կամ հիշողությանը օժանդակող միջոց: Փորձառու մոդերատորը պետք է կարողանա քննարկումը վարել ուղեցույցի բոլոր թեմաների հիման վրա՝ միաժամանակ լինելով ճկուն և հաշվի առնելով մասնակիցների՝ զրույցը տանելու տրամաբանությունը:

Ուղեցույցը կարող է մշակվել որպես հարցերի ամբողջություն, սակայն խորհուրդ է տրվում մշակել թեմաներ, որոնց համապատասխան գրվեն նաև կոնկրետ հարցեր: Հարցերի մանրամանությունը կախված է մոդերատորի փորձառությունից. Առավել պակաս փորձ ունեցող մոդերատորը կարիք ունի առավել մանրամասն մշակված ուղեցույցի:

Ուղեցույցը կարող է փոփոխվել ամեն ֆոկուս խմբային քննարկումից հետո՝ կախված վերջինիս ընթացքից և արդյունավետությունից:

Ուղեցույցը չպետք է ներառի այնքան թեմաներ, որ ձանձրացնի և/կամ հոգնեցնի մասնակիցներին: Եթե ուղեցույցում ներառված է չափազանց շատ թեմաներ, ապա դա վկայում է այն մասին, որ հետազոտության ուղղությունը հստակ չէ կամ անհրաժեշտություն կա մի քանի մեթոդներ կիրառելու:

Ուղեցույցը մշակելիս պետք է խուսափել այնպիսի հարցեր ներառելուց, որոնք «հետաքրքիր կլիներ իմանալ» շարքից են, սակայն այնքան էլ չեն առնչվում տվյալ հետազոտության խնդիրների հետ: Ինչպես նաև պետք է խուսափել այնպիսի հարցեր ներառելուց, որոնք ավելի շատ կիրառելի են քանակական հետազոտություններում, օրինակ, «որքան» և «որքան հաճախ» և այլն:

Ուղեցույցը պետք է մշակել ընդհանուրից մասնավորի գնայու տրամաբանությամբ: Սա քննարկման տրամաբությունը դարձնում է բնական: Ինչպես նաև արդյունքները վերլուծողին հնարավորություն է տալիս տեսնել քննարկման կառուցվածքը:

Ուղեցույցում թեմաները այնպիսի հաջորդականությամբ պետք է մշակվեն, որ մասնակիցներին չդնեն կաշկանդող իրավիճակների մեջ:

Նույն հետազոտության շրջանակում անհրաժեշտ է մշակել տարբեր ուղեցույցներ տարբեր խմբային քննարկումների համար, որոնց մասնակիցներն ունեն տարբեր հատկանիշներ: Օրինակ, բակալավրի ուսանողների և մագիստոսի ուսանողների համար պետք է մշակել տարբեր կամ որոշ թեմաներով իրարից տարբերվող ուղեցույցներ:

Ֆոկուս խմբի տեխնիկական ապահովում

Ֆոկուս խմբային քննարկման համար իդեալական պայմաններն են.

- Առանձնացված վայր
- Հարմարավետ վայր
- Միջամտություններից, խանգարող գործոններից ապահովված վայր
- Ձայնագրմանը չխանգարող վայր:

Եթե հնարավոր է, պետք է ապահովել պայմաններ, որ դիտորդները կարողանան ներկա գտնվել քննարկմանը, առանց խանգարելու մասնակիցներին, իդեալական տարբերակ է, եթե նրանք աննկատ լինեն մասնակիցների համար:

Վայրի ընտրությունը պայմանավորված է հետազոտական խնդիրներից: Եթե թեման անձնական է, կարելի է անցկացնել տանը, եթե գործնական է, ապա գրասենյակում:

Նպատակահարմար է մասնակիցների և մոդերատորի **կիսաշրջանաձև** դասավորվածությունը, ինչը մոդերատորին մասնակիցների հետաչքերով շփվելու հնարավորություն է տալիս: Ասիստենտը պետք է նստի մոդերատորի կողքը, որպեսզի անհրաժեշտության դեպքում առանց քննարկումն ընդհատելու կարողանա հաղորդակցվել մոդերատորի հետ՝ ցածրաձայն, թղթի միջոցով և այլն:

Ֆոկուս խմբային քննարկման փուլերը

Երբ ֆոկուս-խմբի մասնակիցները հավաքվում են, մոդերատորը քննարկումըսկսում է կարճ նախաբանով: Նախաբանում մոդերատորը պետք է ներկայացնի ֆոկուս-խմբի երեք հիմնական բաղադրիչները՝

1. Նախապատրաստում
2. Ներածական մաս կամ նախաբան
3. Լայն քննարկում
4. Ամփոփումը

Նախապատրաստում

Մինչ բուն քննարկման սկսելը պետք է իրականացնել հետևյալ գործողությունները.

- Դասավորել աթոռները կիսաշրջանաձև
- Ձայնագրման սարքը միացնել
- Կանխել հնարավոր անկարգությունները, խառնաշփոթը: Կանխել հնարավոր միջամտությունը. քննարկման սենյակի դուռը փակ պահել կամ ունենալ պատասխանատու, ով կկանխի անսպասելի անձանց մուտքը քննարկման սենյակ
- Կանխել անսպասելի մասնակիցների կամ դիտորդների մուտքը:

Այս գործողությունների համար սովորաբար պատասխանատու է **ասիստենտը**:

Մոդերատորի նախաբանը, ներածական մաս *(տևողությունը 10 րոպե)*

Մինչև քննարկումը կսկսի, մոդերատորը ներկայացնում է կարճ նախաբանը: Նախաբանի նպատակներն են հանգստացնել մասնակիցներին, խմբին ներկայացնել աշխատանքային կանոնները և մասնակիցների հետ ընկերական հարաբերություններ հաստատել:

Մասնակիցները սկսում են հանգստանալ (ազատ զգալ իրենց), երբ նկատում են, որ մոդերատորը հանգիստ է և խոսում է ազատ և ընկերական տոնով: Որոշ ոչ պաշտոնական խոսակցությունները, կատակները, ժպիտը կարող են օգտակար լինել:

Մոդերատորը ներկայացնում է իրեն

Այս ժամանակ մոդերատորն ասում է իր անունը և երբեմն այլ ինֆորմացիա է ասում: Սա հեշտացնում է ընկերական հարաբերություններ հաստատումը խմբի մասնակիցների հետ և խումբը ներկայացնում է որպես ապահով վայր ինքնաարտահայտվելու համար:

Քննարկման գլխավոր նպատակը ներկայացված է: Մասնակիցներին ներկայացնում են, թե ինչի համար են նրանց միասին հավաքել: Սա կնպաստի նրանց խմբային աշխատանքի նպատակը ընկալելուն: Մասնակիցներին նաև ներկայացվում է, որն է իրենց հավաքվելու նպատակը, որպեսզի վերանա նրանց անհանգստությունը և զերծ մնան ցանկացած թյուրըմբռնումներից: Ներկայացվում է նաև, թե ինչպես են մասնակիցները ընտրվել:

Տարակարծությունը խրախուսվում է: Մասնակիցներին ասվում է, որ խմբում չկան ճիշտ և սխալ պատասխաններ և մյուսներից տարբեր կարծիք ունենալը նորմալ է: Պետք է խրախուսել քննարկվող թեմայի վերաբերյալ ինչպես դրական, այնպես էլ բացասական կարծիքների արտահայտումը: Նրանց անկեղծ և ազնիվ կարծիքները արտահայտելը խրախուսվում է:

Մոդերատորի չեզոքությունը (նեյտրալությունը): Մոդերատորը սովորաբար հավաստիացնում է մասնակիցներին, որ նա անձնական շահագրգռվածություն չունի քննարկվող նյութի մեջ, և նրանց կարծիքները նրա վրա որևէ ազդեցություն չեն ունենալու:

Բացատրվում են խմբի կանոնները: Մասնակիցներին խնդրվում է խոսել առանձին-առանձին, նրանք կարող են բանավիճել, սակայն առանց մեկը մյուսին ընդհատելու: Եթե խումբը տեսագրվում է կամ ձայնագրվում, ապա այլ կանոններ կարող են անհրաժեշտ լինել: Օրինակ, մոդերատորը կարող է խնդրել մասնակիցներին խոսել առավել հստակ, ոչ ցածրաձայն: Ինչպես նաև մոդերատորը պետք է մասնակիցներին պարզաբանի ձայնագրման անհրաժեշտության մասին շեշտելով, որ այն իրականացվում է միայն քննարկման ընթացքում հնչած կարծիքները չհիշելու պատճառով չկորցնելու նպատակով:

Մաս առաջին: Նախապատրաստում *(տևողությունը 15 րոպե)*

Այս մասում տրվում են մասնակիցներին առնչվող հարցեր, որոնք քննարկվող առարկայի մասին պետք է միայն ընդհանուր տեղեկություններ տան: Օրինակ, եթե մասնակիցներն ուսանողներ են, պետք է խնդրել նրանց պատմել մի փոքր իրենց մասին՝ որ կուրսում են սովորում, քանի տարեկան են և այլն:

Սակայն կարևոր է հիշել, որ՝

1. Այն հարցերը, որոնք կարող են պատասխանողին կաղապարների մեջ դնել, չպետք է տրվեն:
2. Այն հարցերը, որոնց միջոցով կբացահայտվի պատասխանողների դիրքային տարբերությունները, չպետք է տրվեն:

Նախապատրաստման նպատակն է շուրջ տասը րոպեի ընթացքում անհատների խմբին վերափոխել հագործակցող խմբի: Ավելին՝

- Նախապատրաստումը պատասխանողներին հնարավորություն է տալիս սկսել խոսել շատ վաղ: Սա օգնում է հաղթահարել խոսելու բարդույթը, որը մեծանում է, եթե խոսքը ուշանում է:
- Մոդերատորի և խմբի իրադրությունը ներկայացնում է որպես «ապահով» վայր և նպաստում է պատասխանողների ազատ ինքնաարտահայտվելուն:
- Խմբի անդամներին պատկերացում է տալիս խմբային աշխատանքի մասին և թույլ է տալիս ճանաչել խմբի մյուս անդամներին:
- Մոդերատորին և խմբի աշխատանքի այլ հետևողներին տալիս է խմբի պատկերը, որը՝ 1) պետք է հետագա հարցազրույցների, քննարկումների վրա ազդեցություն ունենա, 2) մոդերատորին/արդյունքները վերլուծողին հնարավորություն տա հիմնավորելու իր եզրակացությունները քննարկման մասնակիցների ասածներով/քննարկման ընթացքում հնչեցրած կարծիքներով:

Մոդերատորը, անկախ այն բանից, թե ինչ կասեն մասնակիցները, որևէ բացասական դատողություն չպետք է անի: Մոդերատորը նաև պետք է ամեն ինչ անի խմբից հիմնական տեղեկությունները ստանալու համար: Սա հաճախ ներառում է հետևյալը՝

1. Մինչ քննարկման մյուս մասին անցնելը փորձում է հստակեցնել հնչած յուրաքանչյուր պատասխան, որպեսզի տեղ չթողնել անճշտություններին:

2. Խմբի կառուցվածքը հաստատելով և խմբի մասնակիցներին բավականին նեղ շրջանակներում պահելով, այնպես որ կարճ ժամանակում և նվազագույն շեղումներով բուն տեղեկատվությունը ստացվի:

Մաս երկրորդ: Ընդլայնված քննարկում, ֆոկուս-քննարկում *(տևողությունը 60 րոպե)*

Խմբային քննարկման այս մասը ներառում է աստիճանական անցում ընդհանուր թեմաներից ավելի որոշակի խնդիրների: Սակայն այս մասը ներառում է նաև անցում որոշակի, կոնկրետ քննարկումներից, ինչպես՝ երեխաների քանակը ընտանիքում, դեպի ավելի վերացական հարցերի, այսինքն՝ փաստացի քննարկումներից դեպի հարաբերությունների, զգացական, համոզմունքների քննարկմանը, ինչը պատասխանողներից շատերի մոտ կարող է որոշ չափով վախ առաջացնել: Խմբային քննարկման ժամանակ որոշակի հասկացություններ կամ խնդիրներ կարող են մոդերատորի կողմից բացատրվել, որպեսզի պատասխանողների ուշադրությունը կենտրոնացվի հետաքրքրող հիմնական թեմաների վրա:

Քննարկման այս մասի նպատակն է թեմային վերաբերող իրական խնդիրների վերաբերյալ պատկերացումներ կազմելը: Նպատակ է նաև այն, որպեսզի ամբողջությամբ բացահայտվի պատասպանողների պահվածքի հետ կապված դիրքորոշումների դինամիկան և դիտարկվի պատասխանողի խոսքը և զգացմունքները տվյալ թեմայի վերաբերյալ: Նպատակի մեջ չի մտնում գնահատել կամ արժևորել մասնակիցների դիրքորոշումները քննարկվող թեմայի վերաբերյալ:

Ամփոփում *(տևողությունը 15 րոպե)*

Խմբի այս հատվածն առավելապես ուղղված պետք է լինի քննարկված «թեմաների» ամփոփմանն ու վերանայմանը: Այս մասում շատ նպատակահարմար է քննարկել արտահայտված դիրքորոշումների հուսալիությունը: Նպատակահարմար է նաև նշել քննարկման մասնակիցների միջև առաջացած հիմնական տարբերությունները *(ձեզնից ոմանք այսպես են մտածում, բայց ոմանք այլ կերպ)* և հստակեցնել այս տարբերությունները: Այս ամենից զատ, **ամփոփման** ընթացքում շատ հարմար է արտահայտել մնացած անհամաձայնությունները համապատասխան հարցադրումներում և դրանցում պարզաբանումներ մտցնելու համար:

Քննարկման այս հատվածի նպատակն է օգնել մոդերատորին, դիտորդներին և մասնակիցներին հասկանալ, թե ինչ է տեղի ունեցել քննարկման ողջ ընթացքում: Այն մասնակիցներին հնարավորություն է տալիս փոփոխել կամ պարզաբանել իրենց դիրքորոշումը կամ քննարկման առարկայի հետ կապված որևէ միտք ավելացնել: Այն նաև մոդերատորին հնարավորություն է տալիս ստուգել իր եզրակացությունների, հետևությունների և վարկածների ճշտությունը և համապատասխանությունը:

Այս հատվածում մոդերատորից պահանջվում է պարզապես ամփոփել և առանց դատողությունների որոշակիացնել մասնակիցների միջև եղած տարակարծությունները և խմբի քննարկումներից եզրակացություններ անել:

Ֆոկուս խմբային քննարկումների մոդերատորի և ասիստենտի դերը

Ֆոկուս խմբի տարբեր փուլերում մոդերատորի կողմից կիրառվող տեխնիկաները

Ֆոկուս-խմբի այս հատվածում մոդերատորից պահանջվում է գիտելիքների բարձր մակարդակ: Մոդերատորի որոշ առանցքային գործողությունները ներառում են՝

1. **Խորը փորձարկում**. խմբի անդամի կողմից տրված պատասխանները պարզաբանելու և հասկանալու համար: Փորձերը կարող են լինել՝
   - Լռել. այսինքն՝ թույլ տալ պատասխանողին շարունակել միտքը
   - Օգտագործել հայելային տեխնիկան՝ կրկնել պատասխանողի ասածը
   - Կրկնել պատասխանողի խոսքը, սակայն որպես հարց
   - Համեմատել պատասխանները՝ պատասխանողի դիրքորոշումը պարզաբանելու համար, օրինակ. «Ես շփոթված եմ: Ավելի վաղ դուք ասեցիք «Ա», այժմ ասում եք՝ «Բ» »:
   - Օգտագործելով հուշող բառ, այսպես՝

Պատասխանողի պնդումը	**Մոդերատորի փորձը**
«Այն լավն է»	«Ի՞նչն է դրանում լավ»
«Հավանում եմ այս չափը»	«Ի՞նչն է այս չափի մեջ լավը»
«Այն հարմար կլինի»	«ինչ պայմաններում այն հարմարավետ կլինի»
«Այն աշխատում է»	«Ինչից ենթադրեցիք, որ աշխատում է»

   - Օգտագործելով երրորդ անձի տեխնիկան: «Կարծես՝ դուք դրանում համոզված եք: Ի՞նչ եք կարծում մյուսները ինչպես են մտածում»:
   - «Կարո՞ղ եք ավելին ասել»
   - «Ի՞նչ նկատի ունեք դրանով»
   - «Ի՞նչն է ստիպում այդպես մտածել»
   - «Կարո՞ղ եք դրանից մի օրինակ բերել»
   - «Կցանկանայի ավելին իմանալ այդ հարցի վերաբերյալ ձեր գաղափարների մասին»
   - «Կարծում եմ՝ ճիշտ չեն հասկանում ինչ ի նկատի ունեք այդ բառով»
   - «Ի՞նչ պատճառներ ունեք այդպես մտածելու համար»
   - «Ի՞նչ է այդ հաղորդագրությունը /ուղերձը ասում ձեզ»
   - «Ի՞նչ է այն ասում ձեզ անձնապես»
   - «Ի՞նչ կմտածեիք, եթե դա դիտելիս լինեիք»
   - «Ի՞նչ կա ձեր մտքին: Էլ ինչն է տպավորել ձեզ»
   - «Դուք սկսեցիք խոսել .... մասին»

- «Դուք հղում կատարեցիք……»
- «Ի՞նչ բառերով կնկարագրեիք…. »
- «Ինչու՞ կամ ինչու՞ ոչ»

2. **Զգայունությունն** ուղղված է մասնակիցների ըմբռնելիության մակարդակի վերհանմանը: Լավ մոդերատորը պետք է իմանա, թե քննարկման ընթացքում երբ է պետք է անցնել ընդհանուր թեմայից առավել զգայուն թեմայի:
3. **Գործելու/միահյուսելու** տեխնիկան ուղղված է քննարկման նախորդ փուլերում արդեն ասված կարծիքը կամ տեղեկությունը քննարկման ներկա փուլում հնչեցնելուն արդեն մոդերատորի կողմից. Այսինքն՝ այս իմաստով մոդերատորը կարծես թե քննարկման թեմաները "թելերի" նման գործում է, միահյուսում է իրար: Այս տեխնիկայի միջոցով մոդերատորը ոչ միայն ցույց է տալիս, որ ուշադիր է հնչեցված յուրաքանչյուր կարծիքի հանդեպ, այլ նաև նպաստում է քննարկման շարունակականությանը, քանի որ հակառակ դեպքում քննարկումը կլինի մասնատված:
4. **Շարունակական շաղկապումը** միմյանց տարբեր մասնակիցների կողմից արված մեկնաբանություններին տալիս է համադրելի և միասնական իմաստ ունեցող բնույթ: Այսինքն՝ քննարկման ողջ ընթացքում ձևավորվում է խումբ, որը այդ ձևավորմանը զուգահեռ քննարկման թեմայի վերաբերյալ տալիս է միասնական կարծիք: Սա չի բացառում տարակարծությունները, քանի որ խնդիրը ոչ թե մեկ միասնական կարծիք ստանալն է, այլ ապահովելը, որ այդ տարակարծություններում նույն իմաստը հասկացվի բոլորի կողմից: Մոդերատորի խնդիրն է, որ բոլոր մասնակիցների կարծիքները հասկանալի լինեն:
5. **Ճկունությունը** թեմաների քննարկման ընթացքում կարևոր է, քանի որ ընթացքում հնարավոր է, որ մասնակիցները շեղվեն բուն թեմայից: Մոդերատորը պետք է տիրապետի հետազոտության նպատակներին, խնդիրներին, որպեսզի անհրաժեշտության դեպքում կարողանա ազդել քննարկման ուղղության վրա, երբ այն գնում է ոչ ցանկալի, թեմաներին չվերաբերող ուղղությամբ:
6. **Կառավարում** քննարկման ընթացքում առաջացած խնդիրների, ինչպիսին են մասնակիցների միջև կոնֆլիկտները, անհամաձայնությունները կամ մասնակիցների կողմից պատասխանելու, մասնակցելու պատրաստակամության պակասը կամ պասիվ ներգրավվածությանը քննարկմանը: Մոդերատորի խնդիրն է ուղղորդված հարցերի կամ հարցերը հասցեական դարձնելու միջոցով կոնկրետ մասնակիցներին կարողանան ներգրավել կամ կանխել առաջացող կամ աճող լարվածությունը: Կարևոր է ակտիվ լսելու տեխնիկան, ինչը նպաստում է քննարկման ողջ ընթացքը ուղղորդելուն և կառավարելուն:
7. **Տարբեր մոդերատորական մարտավարություններ** կիրառելը և քննարկումը արդյունավետ դարձնելուն ուղղված այլ տեխնիկաներ: Արդյունավետ մոդերատրությունը ենթադրում է.
    - Խրախուսել, որ մասնակիցները զրուցեն միմյանց հետ, այլ ոչ միայն մոդերատորի հետ
    - Իմանալ,թե երբ պետք է սրել իրավիճակը և երբ հանգիստ պահել
    - Փորձարկել մասնակիցներին, բայց ոչ կառավարել նրանց

- Ունակ լինել վերհանելու, որ փոխադարձ հասկացման խնդիր կա քննարկման ընթացքում
- Ուշադրություն դարձնել արտահայտած մտքերի վրա
- Զգայուն լինել մասնակիցների միջև ոչ վերբալ հաղորդակցության վրա, ինչը հնարավորություն կտա ավելի լավ հասկանալ մասնակիցներին և նրանց իրական զգացմունքները
- Չենթադրել, որ այն ինչ մասնակիցները ասում են, այդպես էլ իրականում անում են կամ նկատի ունեն
- Խրախուսել ազնիվ անհամաձայնությունները մասնակիցների միջև
- Խրախուսել չխոսող մասնակիցներին խոսել
- Զսպել գերիշխող կամ ոչ կառուցողական ակտիվ մասնակիցներին
- Լինել հանդուրժող, սակայն միաժամանակ համակարգել/կարգավորել և վերահսկել քննարկումը
- Լինել համբերատար, սակայն խմբին ճիշտ ուղղության վրա պահել
- Սպասել անսպասելին և իմանալ, ինչպես արձագանքել դրան
- Պատրաստ լինել փոփոխություններ անելու, եթե ինչ որ բան չի աշխատում կամ ոչ օգտակար տեղեկություն է ստացվել
- Կիրառել պրոյեկտիվ տեխնիկաներ թեմայի մեջ խորանալու համար, եթե մասնակիցները չեն կարողանում պատասխանել ուղիղ հարցերին:

Ֆոկուս խմբի տարբեր փուլերում օգնական կողմից կիրառվող տեխնիկաները

Սովորաբար խորհուրդ է տրվում ֆոկուս խմբային քննարկումները իրականացնել երկու հոգով՝մոդերատոր և օգնական: Մոդերատորը վարում է քննարկումը, տալիս է հարցեր, հետևում է պատասխաններին, կառավարում է քննարկումը:

Օգնականն ունի օժանդակող դեր: Օգնականը կարող է օգնել մոդերատորին.

- **Կանխել մասնակիցների ուշադրությունը շեղող գործոնների ազդեցությունը**
- **Հետևել ձայնագրման գործընթացին**
- **Դիտարկել և գրառել մասնակիցների ոչ վերբալ հաղորդակցությունները**
- **Կատարել քննարկման սղագրությունը**

Ասիստենտը կարող է պասիվ ձևով մասնակցել քննարկմանը՝ օգնելով մոդերատորին կառավարելուը և ուղղորդելու քննարկման ուղղությունը: Նա կարող է չհնչեցնել հարցեր, սակայն պետք է նշումներ անի այն մասին, ինչը կարող է դուրս մնալ մոդերատորի ուշադրությունից, օրինակ, ցածրաձայն ասված ռեպլիկներ, մեկնաբանություն, ժեստ, որը կարող է չարձանագրվել կամ չձայնագրվել, սակայն կարող է օգտակար տեղեկություն լինել արդյունքների ամփոփման և վերլուծության ժամանակ:

Քննարկմանը կարող են ներկա լինել նաև դիտորդներ, որոնց դերը տարբերվում է օգնականի դերից: Սակայն պետք է հաշվի առնել, որ դիտորդների ներկայությունը կարող է խոչընդոտել առավել զգայուն թեմաների մասին անկեղծ և անկաշկանդ արտահայտվելուն: Այս հարցը

դիլեմայի նման է և ընտրությունը պայմանավորված է հետազոտություն իրականացնողների մասնագիտական կողմնորոշումներով: Իսկ եթե քննարկման վայրը հնարավորություն է տալիս դիտորդներին՝ մասնակիցներից աննկատ մնալ, ապա սա նախընտրելի տարբերակ է:

Դիտորդների դերը

Խմբային քննարկման դիտարկումը հետազոտություն անցկացնողների համար կարող է տեղեկատվության ստացման աղբյուրներից մեկը լինել: Դիտումը մեծ փորձ է տալիս դիտման ենթակաների, նրանց վերաբերմունքի, անհանգստությունների, խոսքի և այլնի վերաբերյալ: Մասնակիցները հնարավոր է տարբերվեն դիտորդներից թե սոցիալական և թե մասնագիտական տեսանկյունից:

Ֆոկուս-խմբի քննարկումները դիտարկելիս դիտորդները կարող են որոշ կերպով հարստացնել իրենց փորձը: Այս հանգամանքները պետք է կապված լինեն ֆոկուս-խմբի սկսվելու հետ:

- Դիտորդները չպետք է ակնկալեն, որ քննարկման յուրաքանչյուր պահը պետք է իմաստալից լինի, կամ յուրաքանչյուր հարցը պետք է աշխատի, կամ յուրաքանչկուր պատասխան պետք է ուշագրավ և իմաստալից լինի, քանի որ մասնակիցները իրական մարդիկ են և պատասխանում են ինքնաբերաբար:
- Դիտորդները խմբերի միջև կամ առանձին խմբի մեջ փոխզիջման գալու ակնկալիք չպետք է ունենան: Փորձառու ուսումնասիրությունը կատարվում է պատասխանների որոշակի խումբ ստեղծելու, վարկածներ առաջ քաշելու և ավելի խորը հասկանալու համար:
- Շատ կարևոր է, որ դիտորդները ուշադիր լսեն թե ինչ է ասվում, այսինքն՝ պետք է խուսափեն ընտրանքային լսումներից, ընկալեն ընդհանուր կարծիքը, պետք է խուսափեն իրենց հասկացածը և իրենց արժևորածը որպես քննարկմանն ասված ներկայացնելուց: Լսումների ժամանակ պետք է ուշադիր լինել նաև իմաստային շերտերին, և բառերի ընտրությանը:
- Դիտորդները, բացի լսելուց պետք է նաև ուշադիր հետևեն: Շարժումները երբեմն կարող են ավելի իմաստալից լինել, քան բուն պատասխանը:
- Քննարկումների ընթացքում դիտորդները պետք է իրենց տպավորությունների մասին նշումներ կատարեն ավարտից հետո քննարկելու համար:
- Դիտորդները կարող են հավելյալ հարցադրումներ անել կամ քննարկման ընթացքում կամ ավարտին:

Առանձնահատուկ հիմնախնդիրները ֆոկուս խմբային քննարկման ընթացքում և դրանք հաղթահարելու ռազմավարությունները

Արդյունավետ և օգտակար քննարկումը պահանջում է հնարավոր խնդիրները հաղթահարելու համար անհրաժեշտ համապատասխան կարողություններ: Որոշ դեպքերում

խնդիրը ողջ խմբի հետ է կապված, որոշ դեպքերում՝ անհատների: Ամեն դեպքում քննարկման արդյունքները կարող են օգտակար չլինել, եթե չհաղթահարվեն խնդիրները: Ֆոկուս խմբային քննարկման ընթացքում հանդիպող խնդիրներն են՝

Հարմարվողական խումբ

Այս խմբի մասնակիցները հետևում կամ համաձայնվում են խմբի ընդհանուր կարծիքի հետ: Քանի որ ֆոկուս խմբային քննարկումը հիմնականում ուղղված է անհատական դիրքորոշումների և կարծիքների ստացմանը, որոնք չեն ենթարկվում անմիջական ստուգման, ապա վտանգ կա, որ մասնակիցները կհնչեցնեն կարծիքներ, որոնք արտահայտվում են բոլորի կողմից և չեն ներկայացնում իրենք անձնական դիրքորոշումը, այսինքն՝ մասնակիցները ձեռք կբերեն խմբային հոգեբանություն: Սա մասնակիորեն է խնդրահարույց, քանի որ շատ դժվար է հասկանալ, թե երբ են մասնակիցները հարմարվում խմբի կարծիքին, իսկ երբ են համաձայնության եկել կարծիքներում:

Ռազմավարություն. Ընդգծել, կարևորել մասնակիցների ազատությունը չհամաձայնվելու մյուսների հետ և հարգանք ցուցաբերել տարբերվող կարծիքների հանդեպ: Մեկ այլ տեխնիկան ենթադրում է հետևյալը՝ խնդրել մասնակիցներին գրել իրենց կարծիքը թղթի վրա, այնուհետև բանավոր ներկայացնեն այն: Սա կստիպի մասնակիցներին հետևել այն դիրքորոշմանը, որը պակաս հեշտորեն կասկածի տակ կդրվի մյուս մասնակիցների կողմից:

Ձանձրալի քննարկում

Այս տիպի խումբը առանձնանում է մասնակիցների պակաս ներգրավվածությամբ և շահագրգռվածությամբ ակտիվորեն արձագանքելու մոդերատորի հարցերին: Սա կարող է պայմանավորված լինել խմբի ծավալով, ինչը հաղորդակցությունը դարձնում է դժվար: Ինչպես նաև մոդերատորի տոնայնությունը կարող է լինել չափազանց պաշտոնական, վախեցնող մասնակիցներին կամ էլ հակառակը, չափազանց ընկերարական, անլուրջ:

Ռազմավարություն I. Կազմակերպել օպտիմալ քանակի մասնակիցներով քննարկում:

Ռազմավարություն II. Մասնակիցներին ներգրավելու նպատակով, կարելի է թեմայի վերաբերյալ պատմվածք հորինել և քննարկել հենց այդ պատմվածքը:

Ռազմավարություն III. Կարելի է օգտագործել թեմային վերաբերող նկարներ կամ պաստառներ:

Ռազմավարություն IV. Կիրառել պրոյեկտիվ տեխնիկաներ

Ռազմավարություն V. Կարելի է մի փոքր ընդմիջում անել, ինչը խմբին հնարավորություն կտա թարմանալ, իսկ մոդերատորին՝ խորհուրդ հարցնել իր գործընկերներից:

Վերահսկողության կորուստ

Նույնիսկ ամենափորձառու մոդերատորը կարող է կորցնել վերահսկողությունը խմբի նկատմամբ: Մոդերատորը կարող է մտահոգվել, որ կկորցնի քննարկման հանդեպ վերահսկողությունը: Այդ մտավախությունը կարող է արտահայտվել հետևյալ ձևերով.

- Տալ այնպիսի հարցեր, որոնց պատասխանը արդեն գիտի մոդերատորը
- Տալ երկիմաստ հարցեր կամ տալ երկու կամ ավել հարցեր միաժամանակ առանց հնարավորություն տալու մասնակիցներին պատասխանելու առաջիններին:
- Անիմաստ ընդհատում՝ կտրել մասնակցի խոսքը մինչ նա կավարտի իր խոսքը
- Հիպոթետիկ/հավանականային դատողություններ անել՝մոդերատորը եզրակացություններ է անում, որոնք հիմնված չեն մասնակիցների կարծիքների վրա
- Խորհուրդ տալ մասնակցին, թե ինչ նա պետք է անի
- Քննարկման թեման արագ փոխել՝ մասնակիցներին հնարավորություն չտալով լիարժեք արտահայտելու իրենց կարծիքները նախորդ թեմայի վերաբերյալ:

Խնդրահարույց մասնակիցներ

Խմբային քննարկման ընթացքում առաջացած հնարավոր խնդիրներն են հետևյալ տիպերի մասնակիցների ներկայությունը.

Գերիշխող մասնակից. այս տիպի մասնակիցը փորձում է կառավարել խմբին՝ ուղղորդել զրույցը, պաշտպանել իր դիրքորոշումը, ազդեցություն ունենալ ուրիշների վրա և վերջին խոսքն ասել:

Ռազմավարություն I. Աչքի շփումով շրջանցել գերիշխող մասնակցից կամ մարմինը շրջել նրանից: Հարցերը տալ քննարկման այլ մասնակիցներին դիմելով նրանց անուններով: Եթե անհրաժեշտ է գերիշող մասնակցին ասել, որ չնայած նրա կարծիքը շատ հետաքրքիր է, Դուք ուզում եք քննարկման մյուս մասնակիցների կարծիքն էլ լսել:

Ռազմավարություն II. Ծայրահեղ դեպքում կարելի է խնդրել գերիշխող մասնակցին լքել խումբը: Սա հնարավոր է բացատրելով մասնակցին՝ «Դուք այսքան տեղեկացված է թեմայից, ես կցանկանայի Ձեզ հետ առանձին զրուցել»:

Ռազմավարություն III. Ռեգլամենտ սահմանել, օրինակ, ասել, որ բոլորը պետք է խոսեն երկու րոպեից ոչ ավել:

Երկչոտ մասնակից. Այս տիպի մասնակիցը կասկածամիտ է, երկչոտ, ոչ վճռական ասելու իր կարծիքը, հնարավոր է նա անհանգիստ է խմբում իրեն զգում, կամ նրան թվում է, որ իր կարծիքը այնքան էլ կարևոր չի:

Ռազմավարություն. Աչքի շփման միջոցով պետք է այս մասնակցին ներգրավել քննարկմանը, ցույց տալ, որ ձեզ հետքրքեց նրա ասածը: Անհրաժեշտության դեպքում պետք է նրան տալ ուղիղ, հեշտ հարցեր:

Փորձագետ մասնակից. Սա գերիշխող մասնակցի մեկ այլ տարբերակ է: Եթե նույնիսկ նա չփորձի կառավարել խումբը, մյուսները կզիջեն նրան և այդպիսով չեն արտահայտի իրենց կարծիքը:

Ռազմավարություն. Պարզել մասնակիցն իսկապես փորձագետ է տվյալ ոլորտում, թե ոչ: Փորձագիտական գիտելիքի տիրապետելու դեպքում, հիշեցրեք այդ մասնակցին, որ իր մեկնաբանությունները կարևոր են, սակայն պետք է մյուսներին էլ հնարավորություն տալ

մասնակցելու կամ խնդրեք նրան ասելու իր կարծիքը մյուսներին լսելուց հետո՝ «Քանի որ Դուք հավանաբար տեղյակ եք այս թեմայից, ապա խնդրում եմ պատասխանել մյուսներից հետո»:

Եթե մասնակիցը իրականում փորձագետ չէ, ապա խնդրել մյուսներին մեկնաբանելու նրա ասածները: Սա մարտահրավեր կլինի նրա համար:

Շատախոս մասնակից. Այս մասնակիցը խոսում է առանց նպատակի և կամ անվերջ՝ կարող է լինել հիվանդագին շատախոս կամ չափազանց նյարդային:

Ռազմավարություն. Լինել առավել կարգավորող: Փորձել պահանջել, որ նա լինի առավել կոնկրետ, վերադառնալ քննարկվող թեմային: Միգուցե անհրաժեշտության դեպքում պետք է ընդհատել նրան: Պետք է հիշեցնել, որ դուք պետք է դեռ մի շարք հարցեր քննարկեք սահմանափակ ժամանակում: Այս ամենը պետք է ասել առանց օտարեցնելու մասնակցին:

Անպատեհ մասնակից. Այս մասնակիցը մեկնաբանություններ է անում, որ կապ չունի քննարկվող թեմայի հետ և կարող է շեղել մյուսներին թեմայից: Նա կարող է լինել վատ տեղեկացված, նյարդային կամ պարզապես վատ լսող:

Ռազմավարություն. Փորձել նորից տալ հարցը կամ վերաձևակերպել այն: Հաշվի առնել, որ կարող եք վերադառնալ այդ հարցին մի քիչ ավելի ուշ:

Անավարտ մասնակից. Այս մասնակիցը տալիս է անավարտ, մանսնակի պատասխան կամ նույնիսկ չի պատասխանում հարցերին՝ նշելով "Չգիտեմ" պատասխանը: Այս տիպի վարքը պայմանավորված է սովորաբար անտեղյակությամբ կամ երկչոտությամբ:

Ռազմավարություն. Նմանատիպ մասնակիցների հետ դրական փոխհարաբերությունների ձևավորմանն ուղղված աշխատանքը պետք է սկսել քննարկման սկզբում, որպեսզի քննարկման ընթացքում կանխվի նմանատիպ վարքագծի ի հայտ գալը: Պետք է փորձել հարցերի վերաձևակերպել կամ հստակեցնել հարցերը:

Շփոթվող մասնակից. Այս մասնակիցը շփոթվում է քննարկման ընթացքում: Դա դրսևորվում է ինչպես վերբալ հաղորդակցման, այնպես էլ ոչ վերբալ հաղորդակցման միջոցով:

Ռազմավարություն. Ընդունել, գիտակցել այդ իրավիճակը (օրինակ, նշեք. «Դուք շփոթված եք թվում», «Փորձեք հարցին պատասխանել մի փոքր ուշ»): Փորձեք վերաձևակերպել հարցերը կամ օրինակներ բերել:

Չափազանց պոզիտիվ մասնակից. Այս մասնակիցը դրական է պատասխանում բոլոր հարցերին: Նա միգուցե ցանկանում է «հաճոյանալ», «դուր գալ» մոդերատորին և ասել այն, ինչ ըստ նրա ուզում է լսել մոդերատորը:

Ռազմավարություն. Հիշեցնել մասնակցին այն, ինչ նշվել է նախապատրաստական փուլում՝ ցանկալի է լսել ինչպես դրական, այնպես էլ բացասական կարծիքներ: Փորձել խաղալ ***սատանայի դատապաշտպանի*** *դերը (քննարկման մասնակից, որը դիտավորյալ պաշտպանում է մի դիրքորոշում, որին ինքը չի հետևում, որպեսզի նպաստի առավել ակտիվ քննարկմանը և վերհանի հակառակ դիրքորոշման բոլոր հնարավոր բացթողումները)՝ "Ես լսել եմ, որ որոշ*

մարդիկ ասում են լրիվ հակառակը”: Փորձեք երրորդ դեմքին հղում տալ՝ “Ինչ եք կարծում, ձեզ ծանոթ մարդիկ, ինչպես են մտածում կամ զգում այդ հարցի մասին”:

Բացասական մասնակից. Այս մասնակիցը բացասական է պատասխանում բոլոր հարցերին: Նա կարող է օգտագործել քննարկումը ինքնադրսևորման կամ իր թշնամանքը արտահայտելու համար: Նա կարող է դիտավորյալ չարտահայտի ճշմարիտ գաղափարներ կամ տեղեկություններ:

Ռազմավարություն. Պետք է լինել զգուշավոր: Պետք է խուսափել պաշտպանողական արձագանքից: Փորձել հակաճառել մասնակցին՝ հաստատելով նրա թշնամանքը կամ բացասական վերաբերմունքը՝ «Թվում է, որ Դուք բարկացած եք: Դա բնական է, քանի որ ես կցանկանայի հասկանալ, թե ինչպես եք Դուք իրականում զգում»: Փորձեք խաղալ ***սատանայի դատապաշտպանի*** *դերը:*

Թշնամական մասնակից. Այս մասնակիցը «հարձակվում է» մոդերատորի անձի վրա:

Ռազմավարություն. Կրկին, պետք է զգուշ լինել: Փորձել հանգստացնել մասնակցին ընդունելով, գիտակցելով իրավիճակը: Պետք է խուսափել պաշտպանողական արձագանքից: Փորձեք մի փոքր լռություն պահպանել: Պատասխանատվությունը դրեք այդ մասնակցի վրա, որպեսզի նա բացատրի նրա հարձակման պատճառը:

Վնասող/կործանիչ մասնակից. Այս մասնակիցը խաթարում է զրույցի հավասարակշռությունը. նա կարող է պնդել, որ մյուս մասնակիցների գաղափարները, կարծիքները սխալ են կամ մոդերատորի հարցերը հիմար հարցեր են:

Ռազմավարություն. Պետք է արագ կայունացնել քննարկումը: Խնդրել մյուս մասնակիցներին մեկնաբանել այդ մասնակցի դատողությունները: (Սա կարող է վտանգավոր լինել, եթե այդ մասնակցի դատողությունները խանգարում են կամ բարկացնում են որևէ մեկին): Կամ ներկայացրեք այլընտրանքային տեսակետ՝ “Դա հետաքրքիր է, սակայն ես լսել եմ, որ որոշ մարդիկ այլ կերպ են մտածում...”: Սա հնարավորություն է տալիս մյուս մասնակիցներին ընտրելու այս կամ այն դիրքորոշումը և շարունակել քննարկումը:

Հարցական մասնակից. Այս մասնակիցը շարունակում է հարցնել մոդերատորին նրա կարծիքները:

Ռազմավարություն. Ընդունել իրավիճակը՝ «Ինչպես ցանկացած մեկը, ես էլ ունեմ իմ կարծիքը, սակայն մեր այսօր քննարկման նպատակը ձեր կարծիքը ստանալն է»: Եթե անհրաժեշտ է, ասել, որ կարող եք տալ Ձեր կարծիքը քննարկումից հետո: Մեկ այլ մոտեցում է, եթե փորձեք հարցնել մասնակցին, ինչու է հարցեր տալիս: Փորձել հարցերը նորից տալ մյուս մասնակիցներին:

Ֆոկուս խմբային քննարկման արդյունքների վերլուծություն և ներկայացում

Ֆոկուս խմբային քննարկման արդյունքների մշակումը

Քննարկումների իրականացումից, տվյալների ստացումից հետո պետք է ամփոփել արդյունքները և վերլուծություն կատարել:

Վերլուծության իրականացումը ենթադրում է հետևյալ քայլերը՝

1. Որոշել, թե ով պետք է իրականացնի վերլուծությունը: Հաճախ մոդերատորն է գրում վերլուծությունը, սակայն հնարավոր է, որ այս գործընթացում նա աշխատի այլ աշխատակիցների հետ:
2. Մշակել վերլուծության պլան: Եթե հետազոտությունը լավ է պլանավորված, ապա վերլուծության մի շարք բաղադրիչներ արդեն պետք է մշակված լինեն՝
   - Հետազոտության նպատակ, խնդիրներ
   - Մեթոդաբանության և մեթոդիկայի հիմնավորում
   - Խմբային քննարկման ուղեցույց
   - Ինքնագնահատման հարցաթերթ և այլն
3. Վերլուծել քննարկումների բովանդակությունը, ինչի համար վերլուծաբանը պետք է՝
   - ուշադրությամբ լսել ձայնագրությունները և կատարել/ուսումնասիրել սղագրությունները,
   - սահմանել տարբեր դիրքորոշումները,
   - սահմանել տարբեր դիրքորոշումների փաստարկման ուժեղ կողմերը,
   - վերհանել այդ դիրքորոշումները հաստատացնող նախադասություններ:
4. Սինթեզել քննարկումները: Սա վերլուծության ամենաբարդ փուլերից է և պահանջում է բավական ժամանակ և փորձառություն:
   - Անհրաժեշտ է ուշադրությամբ կարդալ սղագրությունները և քննարկումների ընթացքում մոդերատորի, օգնականի և դիտորդների կողմից արված նշումները
   - Սահմանել այն դիրքորոշումները, կարծիքները կամ տեղեկությունը, որը վերաբերում է յուրաքանչյուր թեմային: (Օրինակ, ուսանողների դժգոհությունը բուհում դասավանդող դասախոսներից կարող է դրսևորվել ուսանողների հետ անցկացված բոլոր խմբային քննարկումներում)
   - Ընդհանրացնել և լուսաբանել այդ հաստատուն տեղեկությունները՝ հիմնվելով քննարկումներից ստացված այլ տեղեկությունների վրա: (Օրինակ, կարող է պարզվել, որ միայն մագիստրատուրայի ուսանողներն են դժգոհ դասավանդող դասախոսներից կամ միայն ցածր առաջադիմություն ցուցաբերող ուսանողներն են դժգոհ դասավանդող դասախոսներից):
   - Սահմանել տարբերությունները և տարակարծությունները յուրաքանչյուր թեմային: Ընդհանրացնել և ցույց տալ այդ դիրքորոշումները՝ հիմնվելով արդյունքների վրա: (Օրինակ, կարող է մասնակիցները հենց իրենք են բաժանում են իրենց խմբերի՝ վատ սովորողներ և լավ սովորողներ)

- Ի հայտ բերել և սինթեզել յուրաքանչյուր թեմա կամ մոդել, օրինակ, որ արտահայտվել է քննարկումներում: Ընդհանրացնել և լուսաբանել այդ այդ օրինակները՝ հիմնվելով քննարկումներից ստացված տեղեկությունների վրա: (Օրինակ, դժգոհ ուսանողների դիրքորոշումը պայմանավորված է այլ գործոններով՝ նրանց բնակավայր և այլն)

5. Ստեղծել քննարկումների ընդհանրական սինթեզը: Սա ներառում է հետևյալը՝
   - Պետք է մտածել հետազոտության նպատակների մասին և այն հիմնական որոշումների և գործողությունների, որոնք պետք է կատարել
   - Քննարկումների ընդհանրացման, գործողությունների և որոշումների հիման վրա պետք է տալ առաջարկություններ և երաշխավորություններ, որոնք կարող են ներառել նաև նոր տեղեկության ստացման անհրաժեշտության մատնանշմանը՝ ֆոկուս խմբային քննարկումների, քանակական հետազոտությունների կամ այլ մեթոդների միջոցով:

Ֆոկուս խմբային քննարկումների արդյունքների մշակման առանձնահատկությունները

Ֆոկուս խմբային քննարկման արդյունքների մեկնաբանության ժամանակ պետք է խուսափել հետևյալ **բացթողումներից**՝

- **Զգտել քանակական դարձնել տվյալները**

Ֆոկուս խումբը երբեք չի կարելի մեկնաբանել թվերով: Սխալ է ասել, որ «մասնակիցների 30 տոկոսը ասել է...» կամ «3 մասնակից նշել է, որ...»: Սովորաբար, այս բացթողումը արվում է այն դեպքում, երբ իրականացվել է մեծ քանակի խմբային քննարկումներ:

- **Մասնակիցների մեկնաբանությունները բառացի ընդունել**

Ֆոկուս խմբային քննարկումները հնարավորություն է տալիս թափանցել պատասխանների խորքը: Սա մասնակիորեն է ճշմարիտ, քանի որ մարդիկ ոչ միշտ գիտեն, թե ինչ են իրականում զգում թեմայի վերաբերյալ կամ եթե գիտեն, չգիտեն, թե ինչպես արտահայտել դա: Ամեն դեպքում բառացի մասնակիցների ասածների բառացի մեկնաբանությունը կարող է սխալ եզրակացությունների հանգեցնել:

- **Զախողել քննարկման արդյունքների սինթեզումը և կոնցեպտուալիզացիան/ հասկացությունների ձևավորման գործընթացը**

Այս բացթողումը հաճախ պայմանավորված է հետազոտողի հստակության պակասով կապված հետազոտության նպատակների և խնդիրների հետ: Քանի որ մասնակիցները իրենց խոսքում կարող են չհետևել հիմնական թեմաների հստակ տրամաբանությանը, խոսել չափազանց մանրամասն, ապա նրանցից ստացված կարծիքները պետք է ընդհանրացնել, որպեսզի բոլոր քննարկումների արդյունքները հնարավոր լինի համեմատել և համադրել: Այսինքն՝ արդյունքները սինթեզելու և կոնցեպտուլիզացնելու գործընթացը ձախողելու

սպառանալիք կա, որն առնչվում է մանրամասն արդյունքները ընդհանրացնելու հետ: Վերլուծողը պետք է դուրս բերի մասնակիցների կարծիքների, դիրքորոշումների հիմնական միտումները, մոտեցումները, անհրաժեշտ է խմբավորել դրանք:

Վերջնական արդյունքների ներկայացումը հաշվետվության տեսքով

Ֆոկուս խմբային քննարկման **հաշվետվությունը** կարող է բաղկացած լինի հետևյալ բաժիններից՝

- Բովանդակություն
- Ներածություն
- Հետազոտության նպատակներ և խնդիրներ
- Հետազոտության մեթոդաբանություն
- Մեթոդաբանության հիմնավորում
- Արդյունքների ներկայացում
- Ամփոփում և առաջարկություններ
- Հավելվածներ
  - Ֆոկուս խմբային քննարկման ուղեցույց
  - Ստուգման հարցաթերթ
  - Ինքնագնահատման հարցաթերթ
  - Օժանդակ նյութեր
  - Գրականության ցանկ
  - Հապավումների ցանկ

Գրականություն

1. Թադևոսյան Գ., “Որակական սոցիալական հետազոտություններ. Տեսություն, մեթոդաբանություն և մեթոդ”, Երևան, 2006
2. Белановский, С., Метод фокус-групп, М., 1996.
3. A skill building guide for making focus groups work, 2001
4. Cresswell J. W. (2009), Research design: Qualitative, quantitative, and mixed methods approaches, Sage, Thousand Oaks
5. Dawson, S. Manderson, L and Tallo, V.L. A Manual for the Use of Focus Groups1993,
6. De Negri, B. & Thomas, E. (2003). Making Sense of Focus Group Findings: A Systematic Participatory Analysis Approach. Washington, DC: Academy for Educational Development.
7. Debus, M. (1998). Handbook for excellence in focus group research. Washington, DC: Academy for Educational Development.
8. Introduction to Quantitative Research Methods, John Bacon-Shone, The University of Hong Kong, 2016 March.
9. The handbook for excellence in focus group research, 2000